ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի

2014 թվականի տարեկան հաշվետվություն

Արձանագրություն

2015 թվականի հունվարի 22-ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի փոխմարզպետ՝ Դավիթ Սամսոնյանը, Խորոնք համայնքի ավագանու անդամներ՝ Նշան Ասատրյանը, Նորիկ Կարապետյանը, Էդգար Խաչատրյանը, Արթուր Մամիկոնյանը, Գրիգոր Թադևոսյանը և Խորոնք համայնքի 71 բնակիչներ:

Խորոնք համայնքի ղեկավար Սարգիս Նահապետյանը մանրամասնորեն զեկուցեց 2014 թվականի տարեկան հաշվետվությունը: Խորոնք համայնքի ավագանու անդամները և բնակիչները շնորհակալություն հայտնեցին գյուղապետին ինչպես 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների, սեփական եկամուտների 117.1%-ով կատարողականի, այնպես էլ ընդհանուր բյուջեն 104.3%-ով կատարելու համար:

Ավագանու անդամ Նորիկ Կարապետյանը հարց բարձրացրեց խմելու ջրի հիմնախնդրի վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Ս. Նահապետյանը պատասխանեց ավագանու անդամ Նորիկ Կարապետյանի հարցին և ասաց, որ խմելու ջրի հիմնախնդրի լուծումն ընթացքի մեջ է, և ընթացիկ տարվա առաջին կեսին այդ ուղղությամբ հստակ քայլեր կձեռնարկվեն :

Բնակիչներից հարց բարձրացրին պարարտանյութերի բաշխման մասին , որին պատասխանեց փոխմարզպետ Դավիթ Սամսոնյանը : Ըստ նրա, պարարտանյութը ժողովրդին կհասնի ժամանակին և կբաշխվի ըստ հողակտորների չափաքանակի :

Ավագանու անդամ Ա.Մամիկոնյանը նշեց , որ միջնակարգ դպրոցը սպորտդահլիճի կարիք ունի: Փոխմարզպետը պատասխանեց, որ հետամուտ կլինի հարցի լուծմանը և հարցը կբարձրացնի Արմավիրի մարզպետարանում:

Բնակիչների կողմից հարց առաջադրվեց այն մասին ,որ կենտրոնական ճանապարհը բարեկարգման կարիք ունի : Փոխմարզպետ Դ.Սամսոնյանը պատասխանեց,որ եթե առաջիկայում այդպիսի ծրագիր նախատեսվի, համայնքն անպայման կընգրկվի ծրագրում:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/

Արձանագրությունը կազմեց Խորոնքի գյուղապետարանի

աշխատակազմի քարտուղար՝ /Ս. Կարապետյան/

ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն

Գործավարություն

2014 թվականի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել են 52 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները:

Համայնքի բնակիչներին տրամադրվել են 707 տեղեկանքներ և բնութագրեր:

Ուղարկվել են 159 պաշտոնական գրություններ մարզի ֆեդերալ կառույցների ղեկավարներին:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 66 որոշում և արձակվել է 11 կարգադրություն:

Ավագանու գործունեություն

2014 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 1 արտահերթ և 7 հերթական նիստ: Արտահերթ նիստը հրավիրվել է համայնքի խիստ հրատապ հարցերի քննարկման համար: Մասնավորապես կատարվել են բյուջեի փոփոխություններ և ազատ միջոցների բաշխում:

Գյուղատնտեսական ոլորտ

Գյուաապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին հողօգտագործման աշխատանքներում: Տարվա ընթացքում հանայնքում առկա հողատարածքներն ունեն հետևյալ բաշխումը.

- բնակավայրային նշանակության հողեր՝ 525 հա
- վարելահողեր՝372 հա
- խաղողի այգիներ՝ 5.3 հա
- պտղատու այգիներ՝ 0.35 հա

Գյուղացիական տնտեսություններին տարվա ընթացքում տրամադրվել է 100 տոննա ազոտական, 5 տոննա ֆոսֆորական և 5 տոննա կալիումական պարարտանյութ:

2014 թվականի ընթացքում արտադրվել է և հանրապետության շուկաներ են հանվել 14148 տոննա բանջարեղեն, 675 տոննա ձմերուկ, 630 տոննա կարտոֆիլ, 468 տոննա հացահատիկ և շուրջ 120 տոննա խաղող:

Աշնանը համայնքում կատարվել է 50 հա աշնանացան հացահատիկի ցանքս :

Անասունների գլխաքանակը 01.01.2015 թվականի դրությամբ

Խոշոր եղջերավոր անասուններ՝ 266 գլուխ, որից՝ կովեր՝ 94 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 70 գլուխ, որից մայրականը՝ 62 գլուխ, խոզերի գլխաքանակը կազմել է 139 գլուխ., որից մայրական կազմը՝ 37, մեղվաընտանիքներ՝ թվով 25:

Քաղաքաշինության բնագավառ

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել գյուղում բնակարանաշինության ոլորտում:

2014 թվականի ընթացքում տրվել է շինարարության 3 թույլտվություն: Վերանորոգվել է գերեզմանատան ջրագիծը, որի համար տրամադրվել է 130.000 դրամ գումար: Վերանորոգվել է մայրուղու երկարությամբ ձգվող լուսավորությունը, որի համար ծախսվել է 280000 դրամ գումար:

Հողաշինություն և հողօգտագործման բնագավառ

2014 թվականի ընթացքում կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան:

Կատարվել են հողերի չափագրման աշխատանքներ:

Մրցույթային կարգով վարձակալության է տրվել 16.894 հա հողատարածք, և հողօգտագործողներին տրվել են վարձակալության իրավունքի վկայականներ:

Ընթացքի մեջ է նաև շուրջ 9 հա հողատարածքի վարձակալության հանձման գործընթացը:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

Վերանորոգվել է մայրուղու ասֆալտապատ ճանապարհը, որի համար տրամադրվել է 990000 դրամ գումար:

Խորոնք-Գրիբոյեդով մայրուղու մայթեզրի, ինչպես նաև դեպի Զաքիր և Ադաներ տանող ճանապարհների հարթեցման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 200.000 դրամ գումար:

220.000 դրամ գումար հատկացվել է համայնքի Սայաթ-Նովա փողոցից Սևահողեր թաղամաս անցումային կամուրջներ կառուցելու և Սևահողեր առաջին փողոցը երկրորդ փողոցին միացնող մեկ անցումային ճանապարհ կառուցելու համար:

Իրականացվել է համայնքի գերեզմանատան ճանապարհների բարեկարգման աշխատանքները, որի համար հատկացվել է 420000 դրամ գումար:

Աղբահանության բնագավառ

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան: Այդ աշխատանքների համար հատկացվել է 1400400 դրամ գումար: Աշխատանքները կատարվում են շաբաթական մեկ անգամ:

Մշակույթի և սպորտի բնագավառ

Գործում է ըմբշամարտի խմբակ: Գյուղապետարանը մեծ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը, միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում:

200000 դրամ գումար հատկացվել է Խորոնքի գյուղապետարանի , «Խորոնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ և «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակցուհիներին կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ նվերներ գնելու համար:

Վերջին դասի կապակցությամբ հատկացվել է 230000 դրամ գումար և այդ գումարով շրջանավարտներին գնվել են նվերներ:

Մայիսի 9-ի՝ Հաղթանակի տոնի կապակցությամբ հյուրասիրություն կազմակերպելու համար տրամադրվել է 130000 դրամ գումար: Հյուրասիրությանը մասնակցել են պատերազմի վետերանները,

գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցների աշխատակիցները և համայնքի բնակիչները:

150000 դրամ գումար է հատկացվել մանկապարտեզի սաների տարեվերջյան հանդեսին նվիրված միջոցառմանը. երեխաների համար գնվել են պայուսակներ, գրենական պիտույքներ և խաղալիքներ:

Բերքի տոնին նվիրված միջոցառման համար տրամադրվել է 170000 դրամ գումար: Միջոցառմանը մասնակցել են գյուղապետարանի աշխատակիցները, ավագանու անդամներն ու համայնքի բնակիչները:

Մշակույթի տանը կազմակերպված Ամանորյա միջոցառման համար տրամադրվել է 80000 դրամ գումար: Հրավիրվել են հեքիաթի հերոսներ, Ձմեռ պապ և Ձյունանուշ:

Նոր տարվա կապակցությամբ 980000 դրամ գումար է հատկացվել համայնքի 1-ից 10 տարեկան թվով 370 երեխաներին ամանորյա նվերներ գնելու համար:

Սոցիալական բնագավառ

Գյուղապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել հայրենական մեծ պատերազմի վետերանները , արցախյան հերոսամարտի մասնակիցները , նպաստառուները և կենսաթոշակառուները:

2014 թվականի ընթացքում 3000000 դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել , այդ թվում՝ հիվանդ և սոցիալապես անապահով՝ 37, նորածին երեխաներ ունեցող՝ 34, ուսանողների ճանապարհավարձի՝ 2 և Հայրենական պատերազմի վետերանների՝ 2 ընտանիքների:

Հողի հարկ և գույքահարկ

2014 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 8610.2 դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 101.6%: 2014 թվականի ընթացքում գույքահարկի գծով բյուջեի եկամուտների մասով գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 4769.6 (133.1%) դրամ գումար, որից՝ փոխադրամիջոցների գույքահարկ՝ 4327.7դրամ գումար (129.4%), շինությունների գույքահարկ՝ 441.9 դրամ գումար(184.0%):

Վարձակալական հողերի վարձը 2014 թվականի տարեվերջին կազմել է 1671.7(222.9%) դրամ գումար, իսկ տեղական տուրքերը՝ 114.6 (81.8%) դրամ գումար:

Բյուջեի ծախսերը

Խորոնքի գյուղապետարանը 2014 թվականի ընթացքում կատարել է հետևյալ բյուջետային ծախսերը.

1. Աշխատավարձ-22606.0 դրամ գումար
2. Էներգետիկ ծառայություն և գազ-1276.3դրամ գումար
3. Կապի ծառայություն - 261.5 դրամ գումար
4. Կոմունալ-80.0 դրամ գումար
5. Ապահովագրական ծախսեր-42.0 դրամ գումար
6. Համակարգչային ծառայություն- 250.0 դրամ գումար
7. Տեղեկատվական ծառայություն- 104.0 դրամ գումար
8. Ներկայացուցչական ծախսեր-1560.0 դրամ գումար
9. Ընդհանուր բնույթի ծառայություններ- 960.0 դրամ գումար

   որից՝ 1.ծաղկեպսակ-400.0 դրամ գումար

   2.դիակառքի ծառայություն-330.0 դրամ գումար

   3.այլ բնույթի ծախսեր-230.0 դրամ գումար
10. Մասնագիտական ծառայություն-154.4 դրամ գումար
11. Գրասենյակային նյութեր-350.0 դրամ գումար
12. Տրանսպորտային նյութեր-900.0 դրամ գումար
13. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն -80.0 դրամ գումար
14. Ճանապարհների նորոգում- 1890.0 դրամ գումար
15. Աղբահանում- 1400.4 դրամ գումար
16. Զրամատակարարում- 130.0 դրամ գումար
17. Փողոցների լուսավորության ընթացիկ նորոգում-200.0 դրամ գումար
20. Հանգիստ մշակույթ և կրոն - 5738.7 դրամ գումար
21. Նախադպրոցական ուսուցում 9700.0դրամ գումար
22. Սոցանապահովներ-3000.0դրամ գումար

Ազգաբնակչություն

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2951 մարդ: 2014 թվականի ընթացքում ծնվել է 34 և մահացել է 26 մարդ:

Ընտանեկան նպաստ ստացողների թիվը կազմում է 40 մարդ , թոշակառուները 252 մարդ:

Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց , որտեղ սովորում է 304 աշակերտ և գործում է մանկապարտեզ՝ 52 երեխայի հաճախումով և 14 աշխատակցով:

Համայնքի հիմնախնդիրներ

ա. համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային ճանապարհների նորոգումը

բ. ամբողջ համայնքի (շուրջ 9 կմ 600մ) ջրագծի կառուցումը , որը համարվում է համայնքի ամենահրատապ հարցերից մեկը, քանի որ ստորգետնյա ջրերի մակարդակը 6-7մ-ով իջել է, իսկ համայնքի բնակչությունն ամբողջովին զբաղված է ջերմոցային տնտեսությունների մշակությամբ:

գ. համայնքի հրատապ հարցերից մեկն է նաև խմելու ջրի հիմնախնդիրը: Բնակիչները խմելու ջուրը բերում են 1-3կմ հեռավորությունից:

դ. վերանորոգման կարիք ունեն նաև համայնքի մանկապարտեզը և կուլտուրայի տունը , դպրոցում էլ բացակայում է սպորտդահլիճը:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/